# ԿԱՐԾԻՔ

## ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՔԵՇԻՇՅԱՆԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ» ԹԵՄԱՅՈՎ Ը.00.03- «ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Հայաստանի տնտեսական զարգացումը և կայուն տնտեսական աճի ապահովումն այն առանցքային հիմնահարցն է, որի շուրջ մշակվել են բազմաթիվ ռազմավարական ծրագրեր: Տնտեսական աճի ապահովման առաջին նախադրյալներից է աշխատանքի շուկայի զարգացումը, որը ազգային անվտանգության տարրերից է: Վերջին տասնամյակում աշխատանքի շուկան կարգավորող օրենսդրական փոփոխությունները և պետության վարած սոցիալական քաղաքականությունն իրենց դրական ազդեցությունն են ունեցել աշխատանքի շուկայի ձևավորման և զարգացման գործում: Չնայած ՀՀ աշխատանքի շուկայում տեղ գտած բարեփոխումներին՝ դեռևս առկա են մի շարք խնդիրներ՝ կապված գործազրկության մակարդակի՝ հատկապես երիտասարդների շրջանում, աշխատուժի տեղաբաշխման և աշխատանքային ռեսուրսների արտահոսքի հետ:

Աշխատանքի շուկայում տեղի ունեցող փոփոխություններն անմիջականորեն իրենց արտացոլումն են գտնում մակրոտնտեսական ցուցանիշների որակական և քանակական բնութագրերի վրա: Համաշխարհային տնտեսության մասշտաբով ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով 2009թ.-ին գործազրկության մակարդակը կազմեց 8.4%, 2008թ-ի 6.1%-ի դիմաց, իսկ իրական ՀՆԱ-ի կրճատման տարեկան տեմպը՝ 3.9%: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներից անմասն չմնաց նաև Հայաստանը: 2009 թ. գործազրկության մակարդակը նախորդ տարվա համեմատությամբ բարձրացավ 2.7%-ով, իսկ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդքեսը կազմեց 78.9%: 2018թ. 16.3% գործազրկության մակարդակի պայմաններում ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 105.2%: Ռեսուրսների սահմանափակությամբ օժտված և

տնտեսաաշխարհագրական ոչ այդքան բարենպաստ դիրք ունեցող երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, գործազրկության մակարդակի նույնիսկ մեկ տոկոսով աճը տնտեսության մեջ առաջ է բերում նշանակալի վնասներ: Այս տեսանկյունից արդիական է գործազրկության աճի արդյունքում տնտեսությունում տեղ գտած վնասների գնահատումը, ինչպես նաև գործազրկությունը կրճատող գործոնների ուսումնասիրությունը: Կարևորվում է նաև գործազրկության մակարդակի վրա ազդող այնպիսի գործոնների ուսումնասիրությունը, ինչպիսիք են գործազուրկների միջին տարիքը, գործազրկության տևողությունը և դրանց զարգացման միտումների բացահայտումը:

Քանի որ ՀՀ Վիճակագրական կոմիտեն (այսուհետ՝ ՎԿ) գործազրկությունը բնութագրող ցուցանիշները հրատարակում է ինչպես տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (այսուհետ՝ ՏՏԿԱՀ) նյութերով, այնպես էլ՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Բնակչության զբաղվածության պետական գործակալության տրամադրած տվյալներով, ապա անհրաժեշտ է հիմնավորել դրանց միջև եղած տարբերությունների և տնտեսական աճը բնութագրող ցուցանիշների փոխկախվածությունը:

Այսպիսով, Գ.Քեշիշյանի կողմից ներկայացրած ատենախոսության թեման էական նշանակություն ունի, իսկ դրանում դրված խնդիրներն ու քննարկվող հիմնահարցերը արդիական են:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ աշխատանքի շուկայում գործազրկությունը բնութագրող ցուցանիշների, ինչպես նաև այն կրճատող գործոնների համալիր վիճակագրական վերլուծության միջոցով տնտեսական աճի վրա գործազրկության մակարդակի ազդեցության գնահատումն է:

Այդ նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Հետազոտել ըստ սեռատարիքային խմբերի և կրթական մակարդակի գործազուրկների կառուցվածքը և բացահայտել տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերը,
- Բացահայտել գործազուրկների տարիքի և անավարտ գործազրկության տևողության ազդեցությունը գործազրկության մակարդակի վրա,
- Ուսումնասիրել գործազրկության մակարդակը կրճատող և տնտեսության տարբեր ոլորտներում տնտեսական աճն ապահովող աշխատանքի շուկայի հիմնական գործոնները,
- Բացահայտել տարբեր աղբյուրներից ստացված տվյալներով գործազրկության մակարդակների ազդեցությունը մակրոտնտեսական առանցքային ցուցանիշների վրա և հիմնավորել տնտեսական աճով պայմանավորված դրանց միջև եղած տարբերությունների օրինաչափությունները,
- Վերլուծել և գնահատել ՀՀ-ում բնակչության բարեկեցության վրա գործազրկության մակարդակի և տնտեսական աճի ցուցանիշների ազդեցությունը,
- Բացահայտել գործազրկության մակարդակի և տնտեսական աճը բնութագրող հիմնական ցուցանիշների միջև փոխադարձ կապը, դրանց դրսևորման առանձնահատկությունները ՀՀ մարզերի և քաղաք Երևանի կտրվածքով,
- Բացահայտել գործազրկությունը և տնտեսական աճը բնութագրող հիմնական ցուցանիշների ներտարեկան սեզոնային տատանումների առանձնահատկությունները և փոխկապվածության մեխանիզմները:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններ և առաջարկություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորվել է են թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության առարկան և օբյեկտը, հետազոտության նպատակը և

խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին գլխում ուսումնասիրվել է գործազրկությունը՝ որպես վիճակագրական հետազոտության օբյեկտ, ներկայացվել են տնտեսական աճի տեսական հիմքերը և այն բնութագրող ցուցանիշները, կատարվել է գործազրկության մակարդակի և ՀՆԱ աճի միջև կապի տեսական հիմնավորում:

Երկրորդ գլխում կատարվել է ՀՀ-ում գործազրկության մակարդակի տնտեսավիճակագրական վերլուծություն: Մասնավորապես, վերլուծվել են գործազրկությունը բնութագրող հիմնական ցուցանիշները, կատարվել է ՀՀ մարզերում և Երևանում գործազրկության ցուցանիշների դինամիկայի և կառուցվածքային տեղաշարժերի վիճակագրական վերլուծություն:

Երրորդ գլուխը նվիրված է տնտեսական աճի և գործազրկության մակարդակի միջև փոխկապվածության տնտեսավիճակագրական վերլուծությանը: Մասնավորապես, կատարվել է տնտեսության հիմնական ոլորտներում գործազրկությունը կրճատող և տնտեսական աճը խթանող գործոնների ուսումնասիրություն, հետազոտվել են տնտեսական աճի վրա գործազրկության ազդեցության ուղղությունները և առանձնահատկությունները, նաև՝ կատարվել են գործազրկության մակարդակի և տնտեսական աճը բնութագրող ցուցանիշների ներտարեկան համատեղ տատանումների ուսումնասիրություն և տրենդային մոդելների վրա հիմնված կանխատեսումներ:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացված վերլուծությունների ու հետազոտությունների արդյունքում ստացած արդյունքներից որոշակի հետաքրքրություն կարող են ներկայացնել հետևյալ դրույթները.

- Բացահայտվել է գործազուրկների տարիքի և անավարտ գործազրկության տևողության միջև եղած փոխադարձ կապը և հիմնավորվել է դրանց համատեղ ազդեցությունը գործազրկության մակարդակի վրա:
- Տնտեսական կայուն զարգացման գնահատման ինտեգրալ ցուցանիշի (SEDA) վրա գործազրկության մակարդակի և տնտեսական աճի ցուցանիշների ազդեցության վերլուծության արդյունքում բացահայտվել է ՀՀ բնակչության բարեկեցության վրա նշված գործոնների ազդեցությունը:
- ՀՀ մարզերում և քաղաք Երևանում գործազուրկների թվի կառուցվածքային տեղաշարժերի հիման վրա գնահատվել է դրանց ինտենսիվության աստիճանը, ինչպես նաև բացահայտվել է գործազրկության մակարդակի և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև եղած փոխկախվածության առանձնահատկությունները:
- ՀՆԱ-ի ծավալների և գործազրկության մակարդակի փոխկապակցված շարքերի վերլուծության հիման վրա պարզաբանվել է սեզոնային տատանումների բնույթը, և ժամանակային շարքերի տարբեր բաղադրիչների հիման վրա տրվել են կանխատեսման միջակայքային գնահատականները առաջիկա տարիների համար:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հետազոտության արդյունքներն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել ՀՀ ՎԿ-ի, նաև աշխատանքում արծարծված խնդիրով զբաղվող պետական մարմինների համար:

Աշխատանքում ստացված արդյունքները, կատարված հետազոտություններն ու կառուցված մոդելները կարող են տեղեկատվական նյութ հանդիսանալ տնտեսագետ-հետազոտողների համար, ովքեր զբաղվում են տվյալ հիմնախնդիրների ուսումնասիրություններով:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում տեղ են գտել մի շարք թերություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Գործազուրկների տարիքի և գործազրկության տևողության կապի նկարագրության համար արված ռեգրեսիոն վերլուծության արդյունքները, տեխնիկական մանրամասները լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն: Մասնավորապես, հստակեցման ենթակա հարցերից են գնահատականների նշանակալիությունը, մոդելի տեսքի ընտրության նպատակահարմարությունը, անկախ փոփոխականի որոշման տիրույթը, նաև՝ ստացված մոդելների կիրառական նշանակությունը: Խնդրահարույց է նաև մոդելի գործակիցների մեկնաբանությունը: Օրինակ, ըստ հեղինակի՝ ՀՀ-ում 2008-2017 թթ. գործազուրկ կանանց միջին տարիքի մեկ ամսով ավելացմանը համընթաց անավարտ գործազրկության միջին տևողությունը բարձրացել է 13.1 ամսով ($\frac{157.5}{12} = 13.12$): Այսօրինակ եզրահանգումը խնդրահարույց է, քանի որ ռեգրեսիոն մոդելը քառակուսային է, և x-ի գործակցի գնահատականի մեկնաբանությունը տարբերվում է գծային մոդելի պարագայում արվելիք մեկնաբանությունից:
2. Գծապատկեր 3.1.2-ում ներկայացված է տարբեր ցուցանիշների միջև կառելացիայի գործակիցների հաշվարկման արդյունքը: Պարզ չէ, թե ի՞նչ վիճակագրական ցուցանիշներ են դրվել դրանց հիմքում: Օրինակ՝ ո՞ր ցուցանիշն է դիտարկվել որպես աշխատուժի պահանջարկի գնահատական, ո՞րը՝ որպես առաջարկի գնահատական, ովքե՞ր են աշխատանքով ապահովվածները, ինչո՞ւ է այս ցուցանիշը սերտորեն կապված աշխատուժի առաջարկի ու պահանջարկի հետ, սակայն մյուս կողմից գործազուրկների թվի հետ որևէ կապ չունի:

Այս նույն արդյունքի համատեքստում կարևոր հարցերից է այն, թե որքանո՞վ է ճիշտ գործազրկության կամ զբաղվածության՝ տնտեսական աճի վրա ազդեցության վերաբերյալ եզրահանգումներ կատարելը միայն գծային կոռելացիայի զույգային գործակիցների հիման վրա, ինչպես որ արվել է երրորդ գլխի առաջին պարագրաֆում: Խնդրի կարևորությունը, բարդությունը, նուրբ շերտերի առկայությունը ավելի բարդ մոդելային կառուցվածքների և լուծումների անհրաժեշտություն են զգում:

3. Աղյուսակ 3.2.4-ում ներկայացված ռեգրեսիայի արդյունքները լրացման կարիք ունեն: Պարզ չէ, թե արդյո՞ք մոդելը նշանակալի է (ներկայացված է միայն F վիճականու մեծությունը, որը բավականին փոքր է ստացվել և ազատության ցածր աստիճանների պարագայում մեծ է ոչ նշանակալի լինելու հավանականությունը), ներկայացված չեն ռեգրեսիայի գործակիցների գնահատականների նշանակալիության ստուգման արդյունքները: Բացի այդ, անկախ փոփոխականների գործակիցների գնահատականների նշանները ևս տարակուսանքի տեղիք են տալիս: Բոլոր երեք ցուցանիշների դեպքում ռեգրեսիայի գործակցի գնահատականը բացասական է ստացվել, մինչդեռ ենթադրվում է, որ գործազրկության և տնտեսական աճի գնահատականների նշանները պետք է առնվազն տարբեր լինեին:
4. Աղյուսակներ 3.3.2 և 3.3.3-ում ներկայացված կանխատեսումների արդյունքները խնդրահարույց են, դրանք հիմնվում են միայն տրենդի վրա, մինչդեռ արդյունքային ցուցանիշի ժամանակային շարքերը դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում որակական տեղաշարժ են արձանագրել (2018-ից առաջ և դրանից հետո), ինչը կանխատեսումներում հաշվի չի առնվել: Բացի այդ, ցուցանիշների կանխատեսումային միջակայքը բավականին լայն է, ինչը արդյունքների կիրառականությունը դարձնում է խնդրահարույց:
5. Աշխատանքի գիտական նորույթների մի մասը կարելի է չդիտարկել: Օրինակ՝ նորույթ 2-ը հանգում է առանձին ցուցանիշների միջև զույգային կոռելացիայի գործակիցների հաշվարկին, որը թեկնածուական

ատենախոսության համար նորույթ համարելը դժվար է: Նույն կերպ, նորույթ 3-ը ևս հետազոտական խորություն չունի:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Վերը նշված դիտողություններով հանդերձ, Գ.Քեշիշյանի կողմից կատարվել է ընդգրկուն վերլուծություն, աշխատանքում արծարծվել են արդիական ու նաև՝ հետազոտական տեսանկյունից բարդ, դժվար լուծելի խնդիրներ, ինչը վկայում է հեղինակի հետազոտական նախանձախնդրության և աշխատասիրության մասին:

Ատենախոսությունը հագեցած է թվային, աղյուսակային վերլուծություններով, վիճակագրական տարբեր մեթոդների կիրառմամբ կատարված հաշվարկներով: Հեղինակին հաջողվել է վերհանել հանրապետությունում գործազրկության երևույթի նուրբ շերտերն ու առանձնահատկությունները, տնտեսական գործընթացների հետ փոխկապվածության յուրահատկությունները:

Վերը նշվածի ընդհանրացմամբ, ինչպես նաև կարևորելով հեղինակի հետազոտական եռանդի բազմապատկման շահադրդումը, նոր հենքի վրա հետազոտական գործունեությունը շարունակելու հնարավորության ընձեռնումը, հարկ է եզրակացնել, որ Գևորգ Հարությունի Քեշիշյանի «Տնտեսական աճի վրա գործազրկության մակարդակի ազդեցության տնտեսավիճակագրական վերլուծությունը ՀՀ օրինակով» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջ-ներին, իսկ հեղինակը արժանի է Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվա-ռում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**20.07.2020թ.**

**Պաշտոնական ընդդիմախոս՝**

**Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝** **Ա.Մ. ՔԹՈՅԱՆ**

**Ա.Մ. Քթոյանի ստորագրությունը հաստատում եմ՝**

**ՀՊՏՀ գիտական քարտուղար՝** **Ն.Հ. ԴԱՐԲԻՆՅԱՆ**